ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2023թ. հունվարի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. I կիսամյակի առաջադիմության ամփոփում:

2.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին.- I կիսամյակի առաջադիմության ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ I կիսամյակում 9-րդ՝ դասարանում սովորել են 20 աշակերտներ: Դասարանում կան և՛ լավ սովորող աշակերտներ, և՛ թույլ աշակերտներ: Որոշ աշակերտներ ունեն ցածր առաջադիմություն: : Թույլ աշակերտների հետ մեծ աշխատանք պետք է կատարել: Դասղեկը նշեց, որ դասարանի առաջադիմությունը 70% է, իսկ որակական ցուցանիշը 5% , բացակայությունը կազմում է 372 ժամ:: Դասարանում կա 1 հարվածային աշակերտ /Խաչատրյան Նելլի/, 6 աշակերտներ ունեն անբավարար գնահատականներ տարբեր առարկաներից.

1.Հակոբյան Կարեն /հայոց եկեղեցու պատմություն/
2.Մարտիրոսյան Արսեն / գերմաներեն/
3.Մուրադյան Կորյուն / գերմաներեն/
4.Նավասարդյան Աղասի / գերմաներեն, անգլերեն/
5.Հովհաննիսյան Կարեն/ գերմաներեն, հեպ, ռ. լեզու/
6.Մարտիրոսյան Ստյոպա/հ. լեզու, գերմաներեն, անգլերեն,ֆիզիկա/

Որոշեցին.-Այն երեխաները, որոնք ունեն որոշ թերացումներ, ծնողներն ավելի շատ համագործակցեն ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատեն երեխաների հետ, որպեսզի II կիսամյակում վերացնեն բացթողումները:

2. Լսեցին.-Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ տեղեկացնելով , որ երեխաները տարեվերջին պետք է հանձնեն ավարտական քննություններ: Անհրաժեշտ է ավելի ուշադիր և

հետևողական լինել ուսման հարցում: Այնուհետև ներկայացրեց սովորողների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավերի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում: Դասարանում կա կարգապահական խնդիր: Պահեն ծնող- դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.-Առավել ուշադիր և հետևողական լինել սովորողների ուսման հարցում, որպեսզի կարողանան քննությունները հանձնել: Աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողխորհրդի նախագահ՝ / Լիլիթ Պապյան/
Քարտուղար՝ /Նունե Աբրահամյան/